



**Հայաստանի շախմատային ֆեդերացիայի պաշտոնական
մրցաշարերում լրացուցիչ ցուցանիշների կիրառումը**
(նորացված ցանկ)

ա/ շրջանային մրցակարգ

- 1/ Ձոներբորն-Քերգերի համակարգ*,
- 2/ սև գույնի ֆիգուրներով խաղացած պարտիաների առավելագույն քանակը,
- 3/ անձնական հանդիպման (հանդիպումների) արդյունքը,
- 4/ հաղթանակների առավելագույն քանակը:

բ/ շվեյցարական մրցակարգ

բ1/ բոլոր մասնակիցներն ունեն վարկանիշ

- 1/ հակառակորդների հատված միջին վարկանիշ /հանած ամենացածր վարկանիշ ունեցող մրցակցի վարկանիշը/ կամ մրցաշարային արդյունավետության վարկանիշ /փերֆորմանս/,
- 2/ սև գույնի ֆիգուրներով խաղացած պարտիաների առավելագույն քանակը:

բ2/ ոչ բոլոր մասնակիցներն ունեն վարկանիշ

- 1/ վիրտուալ Բուխհոլց-1 /գումարային Բուխհոլց՝ առանց ամենաքիչ միավոր հավաքած հակառակորդի ցուցանիշի/**,
- 2/ գումարային Բուխհոլց**,
- 3/ սև գույնի ֆիգուրներով խաղացած պարտիաների առավելագույն քանակը:

գ/ թիմային մրցաշարերում տեղերը որոշվում են ըստ թիմային միավորների /թիմի հաղթանակ - 2 միավոր, ոչ-ոքի - 1 միավոր, պարտություն - 0 միավոր/:

Հավասարության դեպքում հաշվի են առնվում.

- ա/ թիմի մասնակիցների հավաքած միավորների հանրագումարը,
- բ/ առաջին տախտակի վրա վաստակած միավորները. եթե հավասարությունը պահպանվում է, ապա հաշվի են առնվում երկրորդ, այնուհետև երրորդ և հաջորդող տախտակների վրա վաստակած միավորները:

* Եկատի ունենալով մրցաշարի նպատակներն ու յուրահատկությունները, կարող է նաև անցկացվել լրացուցիչ մրցաշար կամ մրցախաղ

** շվեյցարական մրցակարգով անցկացվող մրցաշարերում Բուխհոլցի գործակիցը հաշվարկելիս, չխաղացված պարտիաները կհաշվարկվեն իրական արդյունքի համապատասխան՝ «վիրտուալ» /ենթադրյալ/ մրցակցի դեմ (այսինքն, «+»-ը՝ որպես տվյալ մասնակցի հաղթանակ և հակառակորդի պարտություն, «-»-ը՝ որպես տվյալ մասնակցի պարտություն և հակառակորդի հաղթանակ): Ընդ որում, համարվում է, որ տվյալ տուրի սկզբին այդ «վիրտուալ» հակառակորդն ունեցել է նույնքան միավոր, իսկ մինչև մրցաշարի ավարտը մնացած բոլոր պարտիաները նա ավարտել է ոչ-ոքի արդյունքով: